ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ,ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ,ՏՆՏԵՍԱԿԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք,
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գեղակերտ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N

25 հունիսի 2024 թվական

Տեղի ունեցավ Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական, գիտության, կրթության, մշակույթի երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողովի N 01 նիստը: Նիստին ներկա էին հանձնաժողովի անդամներ՝ Լիլիթ Ենգիբարյանը, Աննա Գևորգյանը, Իրինա Սիրունյանը և Հրայր Ասատրյանը:

Հանձնաժողովի նիստի ընթացքում քննարկվեց ՀՀ Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինասատնտեսագիտական և գնումների բաժնի պետի կողմից ներկայացված « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 174-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագիծը՝ Խոյ համայնքի 2024 թվականի հունիսի 26-ի ավագանու հերթական նիստում :

Նիստում քննարկվեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 174-Ա որոշման մեջ հավելված 2-ը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը եվ պաշտոնային դրույքաչափերը համապատասխանեցնել «Համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի կազմման, կառուցվածքի հաստատման, պաշտոնային դրույքաչափերի համամասնության սահմանման» մեթոդական ուղեցույցի 6-րդ կետով սահմանված հաստիքացուցակի օրինակելի ձևին:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի **Խոյ համայնքի ավագանու** ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական, գիտության, կրթության, մշակույթի երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողովը տալիս է հետևյալ եզրակացությունը՝

1. Տալ համաձայնություն Խոյի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը եվ պաշտոնային դրույքաչափերը համապատասխանեցնել «Համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի կազմման, կառուցվածքի հաստատման, պաշտոնային դրույքաչափերի համամասնության սահմանման» մեթոդական ուղեցույցի 6-րդ կետով սահմանված հաստիքացուցակի օրինակելի ձևին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ԼԻԼԻԹ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ**

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ **ԱՆՆԱ ԳԱՌՐԳՅԱՆ**

ԱՆԴԱՄՆԵՐ՝ **ԻՐԻՆԱ ՍԻՐՈՒՆՅԱՆ**

ՀՐԱՅՐ ԱՍԱՏՐՅԱՆ